Հարցաշար 2024 թ.

«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
9–րդ դասարան - 120 բոպե

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր տոնն է անշարժ Հայոց Եկեղեցում. (0,5 միավոր)
   1) Ս. Սարգիս զորավարի 2) Ավետման
   3) Ծաղկազարդի 4) Վերափոխման

2. Ո՞ր կաթողիկոսն է գերեվարվել եգիպտական մամլուքների կողմից 1292թ. *(0,5 միավոր)*
   1) Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի 2) Գրիգոր Է. Անավարզեցի
   3) Բարսեղ Բ. Անեցի 4)Կոստանդին Ա. Բարձրբերդցի

3. Ո՞ւմ կինն էր Եղիսաբեթը. *(0,5 միավոր)*
   1) Հովակիմի 2) Աբրահամի
   3) Զաքարիայի 4) Հովսեփի

4. Ո՞րը հունական դիցարանի աստվածներից չէ. *(0,5 միավոր)*
   1) Զևս 2) Աթենաս
   3) Մարս 4) Արես

5. Ե՞րբ են տոնում Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը քույր եկեղեցիները. *(0,5 միավոր)*
   1) սեպտեմբերի 14-ին 2) նոյեմբերի 5-ին
   3) նոյեմբերի 30-ին 4) սեպտեմբերի 30-ին

6. Ո՞րը Հայոց Եկեղեցու թեմերից չէ. *(0,5 միավոր)*
   1) Վայոց ձորի 2) Գավառի
   3) Արմավիրի 4) Արթիկի

7. Ո՞ր թվականի ժողովում է դատապարտվել Դավիթ Աղթամարցու գործունեությունը.
   1) 1114 թ. 2) 1113 թ.
   3) 1150 թ. 4) 1105 թ.

8. Ինչո՞վ է կատարվում Դրոշմի խորհուրդը. *(0,5 միավոր)*
   1) խաչով 2) գինով
   3) մյուռոնով 4) ջրով

N 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Մարդիկ զարմանքով նկատում էին, որ Հիսուս ամեն ինչ ավելի լավ գիտի, քան իրենց ամենագետ համարող _____ու փարիսեցիները: *(1 միավոր)*

10. _____ ու Հովհաննեսն իրենց հոր հետ ուռկաններն էին նորոգում, երբ Հիսուս կանչեց նրանց: *(1 միավոր)*

11. Աղթամարի կաթողիկոսությունը կորցնում է իր դերն ու նշանակությունը և _____ թ. դադարում գոյություն ունենալուց: *(1 միավոր)*

12. Եգիպտոս գերի տարված _____ կաթողիկոսը 1375 թ. կարողանում է ազատվել գերությունից և վերադառնալ Սիս: *(1 միավոր)*

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Համապատասխանեցնել տեղանվանը. *(1 միավոր)*

1. Հիսուսի մատնության վայրը
2. Աստվածածնի ծնողների բնակավայրը
3. Հովսեփի ծննդավայրը
4. Քրիստոսի խաչելության վայրը:

1	
2	
3	
4	

ա. Նազարեթ
բ. Բեթանիա
գ. Գեթսեմանի
դ. Գողգոթա
ե. Բեթղեհեմ

14. Իրադարձությունը համապատասխանեցնել կաթողիկոսի անվանը: *(1 միավոր)*

1. Երկու անգամ գումարում է հայ աշխարհիկ և հոգևորականների ժողով, որոնցում Աշոտը ճանաչվում է Հայոց թագավոր:
2. Շուրջ երկու ամիս գերեվարվում է Ատրպատականի ամիրայի կողմից և ազատվում մեծ փրկագնի շնորհիվ:
3. Անձամբ գնում է Սյունիք և վերացնում Տաթևի մետրոպոլիտությունը:
4. Կարգալույծ է անում և պատժում թոնդրակեցիներին հարած Հարք գավառի եպիսկոպոսին:

ա. Սարգիս Ա. Սևանցի
բ. Զաքարիա Ա. Ձագեցի
գ. Խաչիկ Ա. Արշարունի
դ. Գևորգ Բ. Գառնեցի
ե. Անանիա Ա. Մոկացի

1	
2	
3	
4	

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Իրադարձությունները դասավորել ըստ հաջորդականության: ***(1 միավոր)***

ա. Հիմնվում է Արմաշի դպրեվանքը:
բ. Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Ներսես Ե. Աշտարակեցին:
գ. Բացվում է Ներսիսյան դպրոցը:
դ. Մատթեոս պատրիարք Չուխաճյանը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի անունը:
ե. Գեներալ Պասկևիչը Թիֆլիսում ստեղծում է հայազգի գործիչներից և ցարական աստիճանավորներից կազմված գաղտնի հանձնաժողով:

1	
2	
3	
4	
5	

16. Դեպքերը դասավորել ըստ հաջորդականության: ***(1 միավոր)***

ա. Ս. Մովսես Տաթևացին ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս:
բ. Միքայել Սեբաստացին Սեբաստիայի Մայր եկեղեցում հրավիրում է մի նոր գաղտնի խորհրդաժողով:
գ. Հակոբ Ջուղայեցին Ս. Էջմիածնում հրավիրում է գաղտնի ժողով:
դ. Եղիազար Ա. Այնթափցին ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս:
ե. Պարսից շահ Աբաս 1-ինը կազմակերպում է Արևելահայ բնակչության բռնագաղթը Պարսկաստանի խորքերը:

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

Ոչ մարդկային ձեռ կըհասնի էն ահավոր բարձունքին.
Եվ ոչ քամին կըհանգցընի՝ վիշապ-քամին ահագին:

1) Ո՞ր բանաստեղծն է մեջբերված հատվածի հեղինակը: ***(1 միավոր)***

_____

2) Ո՞ւմ անվան հետ է կապված բանաստեղծությունը: ***(1 միավոր)***

_____

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: *(2 x 1 = 2 միավոր)*

1) Թաբոր լեռան վրա Հիսուս օրհնում է առաքյալներին, պատվիրում քարոզել, տարածել քրիստոնեությունը:
2) Ըստ Ագաթանգեղոս պատմիչի՝ Խոր Վիրապից դուրս գալուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը 55 օր շարունակ քարոզում և ուսուցանում է մարդկանց:
3) Ս. Մարիամ Աստվածածնին նվիրված տոները ևս անվանվում են տերունական:
4) Հայոց Եկեղեցու տոնացույցում երեք տոներ վերաբերում են Ս. Էջմիածնի Մայր Տաճարին:
5) Մեծ Պահքի 40 օրերից հետո սկսվում է Զատկին նախորդող շաբաթը՝ Ավագ շաբաթը:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ: *(2 x 1 = 2 միավոր)*

1) Ս. Թադեոս առաքյալն առաջինն էր, որ Հայաստան եկավ քարոզելու Քրիստոսի ուսմունքը:
2) Հետևելով Ս. Թադեոս առաքյալի քարոզներին՝ քրիստոնյա է դառնում Սանատրուկ արքայի քույրը՝ Ս. Ոգուհին:
3) Մինչև Հայաստան գալը Ս. Բարդուղիմեոսը քարոզել էր Պարսկաստանում, հասել մինչև Հնդկաստան:
4) Եդեսիայում Ս. Բարդուղիմեոսը հիմնում է եպիսկոպոսական աթոռ, ձեռնադրում հոգևորականներ:
5) Ս. Թադեոս առաքյալի քարոզչության տարիներին Հայաստան են ուղարկվում հինգ արքայազուն իշխաններ, ովքեր դառնում են քրիստոնյա:

20. *Շարադրանք* *(2 միավոր)*

Ներկայացրե՛ք հայկական եկեղեցիների կառուցվածքը (արտաքին և ներքին):